

պանքն հասին ի Ստամպոլ եւ զգիրս տվին,
 խօնթքէրն, վէզիրնին եւ ամենայն իշխանքն 50
 մեծամեծօք հանդերձ ցնծացեալ բերկրեցան
 եւ ձայն խնդութեան եւ ուրախութեան տային.
 եւ աւետիս տային ասելով, թէ Օրս այս մեծ
 է եւ երեւելի, զի ահա մատնեաց Աստուած
 զքրիստոնեայս ի ձեռս մեր. կատարեցաւ 55
 բանն Մէհմէտի, զի ահա առնումք զխզըլ ալ-
 ման. եւ խոյս տվեալ միմիանց խրախոյս
 բարձին եւ գրեցին հրովարտակ ի Պօսնայու
 պէկէրպէկին եւ ի Պէլլրղատ, ի Սիլիսդրայ
 եւ ամենայն Ուռումէլի, Պուլլարք եւ ծովե- 60
 զերայքն, Սէլէնիկ եւ այլ տեղիս, այլ եւ
 յայնկոյս ի Մաղրապ, ի Մսըր, Ռատօսն մեծ
 եւ ի Կիպրոս եւ որ շուրջ եւ հուպ մերձա-
 կայք եւ սահմանակիցք էին Ճռանկացն, զի
 փոյթ ընդ փոյթն ժամանեալ հասցեն ի Վէ- 65
 նէտիկ, աւելի քան զերկոտասան բիւր. այլ եւ
 առաքեաց նամակ տուքին, թէ Ահա առաքեցի
 քեզ օգնական երկոտասան բիւր՝ քո դրա-
 մով այժմ վաղվադակի. եւ ես զկնի դամ
 ձ՞մ զօրօք իմով, արքունի գանձովս իմով. 70
 քանզի կամէին տիրել Փռանկաց աշխարհին:
 Բայց Աստուած ոչ յաջողեաց, այլ Աստուած
 ցրուեաց զխորհուրդս ամբարտաւանից եւ
 հեթանոսաց: Քանզի լուաւ թաղաւորն Սպա-
 նիու եւ թաղաւորն Ճրանցիու եւ այլ մեծա- 75
 մեծ իշխանք, թէ յարեաւ ի վրայ քրիստո-